

Հաղորդակցիլ Ձեր Մատակարարին Հետ



Ձեր մատակարարին հետ ունեցած ձեր հաղորդակցելու որակը կրնայ ազդել ձեր ստանալիք խնամքին վրայ:

Լավ հաղորդակցիլը աշխատանքի դրական յարաբերություն ապահովելու առաջին քայլն է:

Լավ հաղորդակցելու համար միշտ յստակ արտայայտեցե՛ք ձեր ուզածը: Մտիկ ըրե՛ք, թե՛ ան ինչպե՛ս կը վերաբերի ձեր ըսածին, և իրեն հարցումներ հարցուցե՛ք որևէ բանի մասին, որ չէ՛ք հասկնար:

Ձեր մատակարարը ճանչնալու համար ժամանակ տուե՛ք:

- Ձեր մատակարարին հարցուցե՛ք, թե՛ ի՞նչ անունով կ'ուզե՛ք, որ կանչե՛ք զինք և միշտ այդ անունը գործածեցե՛ք:
- Հարցուցե՛ք ձեր մատակարարին իր ունեցած որոշ սովորություններու մասին, որոնք կրնան ազդել ձեր վրայ՝ ինչպես ծխելը, և ըսե՛ք ձեր կարգ մը սովորություններու մասին, զորս ձեր մատակարարը պէտք է գիտնայ:

Ճշդեցե՛ք՝ արդե՞օք ձեր մատակարարը կը հասկնայ ձեր ըսածը:

- Շատ արագ կամ շատ դանդաղ մի խօսի՛ք:
- Եթե՛ ձեր մատակարարին հետ խօսած ատեն ան շուարած կ'երևայ, հարցուցե՛ք՝ արդե՞օք ձեր ըսածը կը հասկնայ: Հարցնելով կրնաք հաստատ գիտնալ՝ արդե՞օք ան հասկցած է ձեր ըսածը, թե՛ պէտք է ակելորդ բացատրություն տաք:

Իրարու հետ լավ հաղորդակցելու օգտակար խորհուրդներ:

- Դիւրիմացություններէ խուսափելու համար իրարու հետ հաղորդակցելու միջոցները միշտ բաց պահե՛ք:
- Դժուար կացություններու պարագային քիչ մը ծիծաղի և համբերութեան դիմելը կրնայ օգնել: Ձեր ձայնին թոնը նոյնպէս կրնայ բարենպաստ ըլլալ:
- Տեր եղե՛ք ձեր զգացումներուն և յարգեցե՛ք ձեր մատակարարին մտահոգությունները՝ գործածելով ես-ով արտայայտություններ:



Օրինակի համար.

«Ես կը տեսնեմ/կը լսեմ/կը զգամ (ըսեք, թէ ինչ է խնդիրը):

Ես կը զգամ (բացատրեցէք ձեր զգացումները):

Ես պէտք ունիմ (հաւանական ելք մը):»



Կրնայ այսպէս երեւալ.

«Ես կը հասկնամ, որ դժուար է այդ ընելիքդ սորվիլ, բայց անհանգիստ կ'ըզգամ, երբ քիթիդ տակ կը տրտրնջաս: Պիտի նախընտրէի, որ ինծմէ ուղղութիւն հարցնէիր և ինծի ըսէիր, թէ ի՞նչ կը զգաս, որպէսզի հարցը միասին կարենանք լուծել:»

«Ասիկա երրորդ անգամն է այս շաբաթ, որ 20 վայրկեան կ'ուշանաս: Ես յուսալքուած կը զգամ ինքզինքս, որովհետեւ իմ ժամերուս դասաւորումը կը խանգարուի, երբ կ'ուշանաս: Ծիշդ ժամանակին պէտք է հոս ըլլաս:»

Հաղորդակցութեան միջոցները բաց պահէք և կեդրոնացէք ձեր խնամքին վրայ:

- Ընկերային եղէք, բայց կարելի եղածին չափ ձեր յարաբերութիւնը պաշտօնական պահէք: Յիշեցէք, որ ան հոն կը գտնուի IHSS-ի խնամք տալու ձեզի:
- Ձեր մատակարարը կրնայ չուզել իր անձնական կեանքի մանրամասնութիւնները կիսել ձեզի հետ: Յարգեցէք անոր անձնականը:
- Մշակոյթի տարբերութիւնները երբեմն կրնան ազդել ձեր յարաբերութեան վրայ և կրնայ դիւրինացութիւններ յառաջացնել: Անյապաղ քննարկեցէք այդ հարցերը և յանգեցէք երկուստէք բաւարարող լուծումի մը:

